ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «21» 03 2025 թ №861-Ա

«ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի №2060-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի №658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը.

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հաստատել՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին պետական աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» 2025 թվականի միջոցառումը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ ապահովել սույն հրամանի հրապարակումը նախարարության պաշտոնական կայքէջում:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի մարտի 21-ի №86-Ա հրամանի

«ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Ի.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետությունում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) զարգացումը միտված է երկրի տնտեսական աճի կայունության ապահովմանը՝ խթանելով ճկուն և նորարարական մոտեցումների կիրառումը:
2. Համաձայն Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տվյալների՝ ՓՄՁ սուբյեկտների մեծամասնությունը կենտրոնացված է Երևանում: Կենտրոնացվածությունը, հատկապես բարձր է միջին մեծության տնտեսավարողների դեպքում: Նման տարածքային անհամաչափությունը մեծ մասամբ պայմանավորված է Երևանում ներքին շուկայի պահանջարկի, ենթակառուցվածքների, մասնագիտական ծառայությունների, որակավորված աշխատուժի և ինստիտուցիոնալ կարողությունների բարձր կենտրոնացմամբ:
3. Կարևորելով ՓՄՁ-ների դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման և դրանով իսկ աղքատության հաղթահարման, ինչպես նաև երկրում սոցիալական համերաշխության ու քաղաքական կայունության ապահովման գործում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում՝ ուղղված ՓՄՁ-ներին պետական աջակցության և դրա զարգացման ուղղությամբ համապատասխան ծրագրերի (միջոցառումների) իրականացմանը, ինչպես նաև ՓՄՁ-ների զարգացման խոչընդոտների բացահայտմանն ու վերացմանը՝ շարունակաբար ներդնելով ՓՄՁ սուբյեկտներին աջակցության առավել արդյունավետ մեխանիզմներ (գործիքներ):
4. «ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» 2025 թվականի միջոցառումը (այսուհետ՝ Միջոցառում) իրականացվելու է «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի կողմից (այսուհետ՝ Իրականացնող մարմին):

Ի.ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

5. **Նպատակայնություն և հասցեականություն**. աջակցությունը հիմնականում ուղղվում է արտադրության և ծառայությունների ոլորտում գործող ՓՄՁ սուբյեկտներին:

6. **Հասանելիություն և թափանցիկություն.** Ծրագրերի իրականացումը պետք է լինի հաշվետու, թափանցիկ և հասանելի ՀՀ ողջ տարածքում գործող ՓՄՁ-ներին:

7. **Համայնքների համաչափ զարգացում.** Միջոցառման ծրագրերի նշանակալի մասն ուղղվելու է Երևան քաղաքից դուրս՝ հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերում գործող ՓՄՁ-ներին աջակցության ցուցաբերմանը:

8. **Համապարփակ մոտեցում.** աջակցությունը պետք է ներառի և ֆինանսական, և ոչ ֆինանսական աջակցության մեխանիզմներ, այդ թվում՝ կարողությունների զարգացում, շուկաների հասանելիություն և տեխնոլոգիական արդիականացում:

9. Համագործակցություն և գործընկերություն. պետական աջակցության ծրագրերը պետք է իրականացվեն համագործակցելով պետական և համայնքային մարմինների, մասնավոր հատվածի, գիտական հաստատությունների և միջազգային գործընկերների հետ:

III.ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

10. **Նոր ձեռնարկությունների ստեղծմանն աջակցություն**. Խթանել նոր բիզնեսների ձևավորումը, աջակցել կանանց, երիտասարդներին[1] և սոցիալական ձեռնարկատիրության զարգացմանը:

11. **Արտադրողականության և արդյունավետության բարձրացում.** Նպաստել ՓՄՁ-ների աճին՝ նորարարությունների, թվայնացման և կայուն բիզնես մոդելների ներդրման միջոցով:

12. **Մրցունակության բարձրացում և միջազգային ինտեգրում.** Աջակցել ՓՄՁ-ներին շուկայի դիվերսիֆիկացման, արտահանման ընդլայնման և միջազգային ստանդարտներին համապատասխանեցման հարցերում:

13. **Նոր աշխատատեղերի ստեղծում.** Աջակցել գործող ՓՄՁ-ների ընդլայնմանը և նոր ձեռնարկությունների ձևավորմանը՝ կայուն աշխատատեղերի ստեղծման նպատակով:

14. **Ֆինանսական հասանելիության բարելավում.** Ընդլայնել ՓՄՁ-ների ֆինանսավորման հնարավորությունները և խթանել ներդրումների ներգրավումը:

IV.ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

15. Միջոցառման իրականացման արդյունքում կանխատեսվում է.

- ՓՄՁ-ների մասնաբաժնի ավելացում ՀՆԱ-ում մինչև 55%:
- Տեխնոլոգիական և արտադրողական բիզնես մոդելների ներդրման միջոցով ՓՄՁ-ների արտադրողականության բարձրացում (12$ ՀՆԱ/մարդxժամ):
- Տնտեսության կայուն և ներառական աճի խթանում՝ նորարարական և մրցունակ ՓՄՁ-ների ձևավորման ու զարգացման միջոցով:

[1] Սույն Ծրագրի շրջանակներում երիտասարդ են համարվում մինչև 35 տարեկան անձինք:

- Ձեռնարկատիրական մշակույթի տարածում, նոր բիզնես գաղափարների իրագործման խթանում:
- Աշխատատեղերի ստեղծման և տնտեսական ակտիվության խթանում:
- ՓՄՁ-ների համար ֆինանսական ռեսուրսների ու արտաքին շուկաների հասանելիության ապահովում:
- Տեղական և միջազգային արժեշղթաներում ներառված, մրցունակ և կայուն ՓՄՁ-ների ստեղծում:
- Նորարարական գաղափարներ և տեխնոլոգիաներ ընդունելու ու ներդնելու բարձր ունակությամբ ՓՄՁ-ների ձևավորում ու զարգացում:

V.ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Միջոցառմամբ նախատեսված ծրագրային ուղղություններն են՝

1) Ծրագրային ուղղություն 1. ՓՄՁ պետական աջակցության ենթակառուցվածքների և աջակցության մեխանիզմների բարելավում.

Գործողություններ.

- ՓՄՁ աջակցման համայնքային ցանցի ստեղծման մեխանիզմի մշակում:
- Համագործակցության հարթակների ձևավորում՝ պետական, մասնավոր և միջազգային կազմակերպությունների միջև:
- ՓՄՁ-ների համար միավորված տեղեկատվական և առցանց ուսուցման հարթակի/մոդուլների ստեղծում՝ աջակցության հասանելիության և արդյունավետության ապահովման նպատակով:
- ՓՄՁ աջակցության նոր գործիքակազմի մշակում՝ ուղղված նորարարությունների, կայուն բիզնես մոդելների և տեխնոլոգիաների կատարելագործմանը՝ հաշվի առնելով ձեռներեցության զարգացման կենսափուլերի առանձնահատկությունները:
- ՓՄՁ աջակցության ծրագրերի իրականացման գնահատման և մոնիտորինգի մեխանիզմների մշակում և կիրարկում:
- Շահառու ՓՄՁ-ների շտեմարանի ստեղծում, որը կներառի ընկերության ելակետային տնտեսական հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը ժամանակի ընթացքում՝ ստացված աջակցության ազդեցությունը գնահատելու համար:

2) Ծրագրային ուղղություն 2. Ձեռնարկատիրական կարողությունների զարգացում, ձեռնարկատիրական մշակույթի տարածում.

Գործողություններ.

2.1. Սկսնակ և գործող ՓՄՁ-ների համար վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում.

Միջոցառման շրջանակներում մանրակրկիտ ընտրության փուլ անցած սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին հնարավորություն կտրվի մասնակցել ձեռնարկատիրական հմտությունների զարգացման դասընթացների: Այդ նպատակով Իրականացնող մարմնի

կողմից աջակցություն կցուցաբերվի ՓՄՁ-ի սուբյեկտներին՝ մրցութային կարգով ընտրված գործարար ծառայություններ մատուցող (ԳԾՄ) կառույցների միջոցով որակյալ հաշվապահական հաշվառման, ներդրումային և զարգացման ծրագրերի մշակման և այլ ուղղություններով ծառայությունների մատուցման ճանապարհով:

«Գաղափարից դեպի բիզնես» ինկուբացիոն ծրագիր սկսնակ գործարարների համար: Ծրագիրն ուղղված է նոր ձեռնարկատիրական գաղափարների բացահայտմանը և իրականացմանը, ինչպես նաև սկսնակ ձեռնարկությունների աճի ներուժի իրացման համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և ֆինանսական միջոցների տրամադրմանը: Ծրագրի շահառուները կանցնեն ինտենսիվ ուսուցում 30-40 ժամ, խորհրդատվական և ուղղորդման ծառայություններ՝ ուղղված իրատեսական բիզնես ծրագրի մշակմանը:

Դասընթացը կներառի հետևյալ հիմնական բաղադրիչները.

- **Բիզնեսի հիմունքներ** – բիզնես գաղափարի ձևավորում, շուկայական վերլուծություն, իրավական պահանջներ:
- **Մարքեթինգ և վաճառք** – ապրանքանիշի զարգացում, թվային մարքեթինգ, շուկայի սեգմենտավորում, հաճախորդների սպասարկում:
- **Ֆինանսական պլանավորում** – բյուջետավորում, կանխիկի հոսքերի կառավարում, ինքնարժեքի հաշվարկ, հարկային հաշվառում:
- **Նորարարություն և թվայնացում** – կայուն և շրջանաձև բիզնես մոդելներ, նորարարական մոտեցումների և թվային գործիքների կիրառում բիզնեսի համար:
- **Մենթորություն և համագործակցություն** – փորձառու ձեռնարկատերերի հետ շփում, խորհրդատվություն:

Ծրագրերը կիրականացվեն սեմինարների, առցանց դասընթացների, ինտերակտիվ աշխատանքային հանդիպումների և մենթորության ձևաչափերով՝ ապահովելով գործնական գիտելիքների ձեռքբերում: Ծրագրի արդյունքում մշակված բիզնես ծրագրերը կգնահատվեն գնահատման հանձնաժողովի կողմից (Հանձնաժողով), որը կազմված կլինի պետական և ոչ պետական շահագրգիռ մարմինների ներկայացուցիչներից:

Հանձնաժողովի կողմից լավագույն գնահատականի արժանացած գործարար գաղափարները ներկայացրած սկսնակները կարող են հավակնել ֆինանսական աջակցության վարկային երաշխավորությունների ձևով (Ծրագրային ուղղություն 4):

Գործող ՓՄՁ-ների համար, տվյալ ծրագրային միջոցառման (ուղղության) շրջանակներում կիրականացվեն վերապատրաստման դասընթացներ և մասնագիտական խորհրդատվություն, ինչպես թեմատիկ, այնպես էլ ոլորտային ուղղվածությամբ: Դասընթացների բովանդակությունը և թեմաները կարող են որոշվել իրականացնող կազմակերպության կողմից կատարված կարիքների գնահատման հիման վրա: Հանձնաժողովի կողմից լավագույն գնահատականի արժանացած գործարար գաղափարները ներկայացրած ՓՄՁ-ները կարող են հավակնել ֆինանսական աջակցության վարկային երաշխավորությունների ձևով (Միջոցառում 4):

Բացի այդ, ՓՄՁ-ների տեղեկատվական աջակցություն կցուցաբերվի օրենսդրական փոփոխությունների և կարգավորումների վերաբերյալ, ինչպես նաև ՓՄՁ ոլորտի հետ առնչվող առկա պետական և ոչ պետական կառույցների կողմից իրականացվող ծրագրերի և աջակցության մեխանիզմների վերաբերյալ:

2.2. Ձեռնարկատիրության թեմայով հանրային իրազեկման արշավներ, սեմինարներ և համաժողովներ:

- **<u>Իրազեկման և տեղեկատվական մարզային արշավներ.</u>**

Իրազեկման և տեղեկատվական մարզային արշավներ կիրականացվեն ՀՀ մարզերում բիզնեսի հնարավորությունների ներկայացման և պետական աջակցության ծրագրերի հասանելիության ապահովման նպատակով: Իրազեկումը կկատարվի տեղեկատվական հանդիպումների և աշխատաժողովների միջոցով՝ ընդգրկելով բոլոր մարզերը:

Հանդիպումների միջոցով կհանրայնացվեն ձեռնարկատիրության հաջողված պատմությունները՝ խրախուսելով նոր ձեռնարկությունների ձևավորումը և երիտասարդների ներգրավվածությունը:

Պարբերաբար կանցկացվեն բաց քննարկումներ տնտեսավարողների հետ՝ պետական աջակցության ծրագրերի, օրենսդրական փոփոխությունների և ձեռնարկատիրության խթանման մեխանիզմների վերաբերյալ: Համատեղ քննարկումներ կկազմակերպվեն ՓՄՁ շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների և գործարար խմբերի հետ, որոնց ընթացքում կվերլուծվեն ձեռնարկատիրական ոլորտում առկա հիմնախնդիրները և կձևավորվեն նոր գործիքակազմի առաջարկներ:

- **<u>«Լավագույն գործարար» մրցանակաբաշխություն՝ երիտասարդների, կանանց և սոցիալական ձեռնարկությունների ներգրավմամբ.</u>**

Ձեռնարկատիրական մշակույթի տարածման և լավագույն նախաձեռնությունների խրախուսման, տնտեսության տարբեր ճյուղերում գործարարների նվաճումների՝ ըստ արժանվույն գնահատման, հանրահռչակման և սատարման նպատակով կկազմակերպվի **<u>«Լավագույն գործարար» մրցանակաբաշխությունը</u>**:

Մրցանակաբաշխության առանձին հատուկ անվանակարգերը կարող են լինել՝

✓ Տարվա առաջընթաց
✓ Տարվա նորարարական բիզնես
✓ Կայուն բիզնեսի մոդելի լավագույն կիրառություն
✓ Լավագույն երիտասարդ ձեռներեց
✓ Լավագույն կին ձեռներեց
✓ Լավագույն սոցիալական ձեռնարկություն

Մրցանակաբաշխությանը կներգրավվեն բոլոր շահագրգիռ կառույցները, այդ թվում միջազգային և դոնոր կազմակերպությունները:

Մրցանակակիրները կստանան գործընկեր կառույցների կողմից առաջարկվող՝ այդ թվում ֆինանսական և ներդրումային ծրագրերին մասնակցության արտոնություններ:

Մրցանակաբաշխության արդյունքներն ու հաղթողների հաջողության պատմությունները կհանրայնացվեն՝ խթանելու ձեռնարկատիրական մտածելակերպը:

3) Ծրագրային ուղղություն 3. ՓՄՁ-ների նորարարական և միջազգայնացման կարողությունների զարգացում, թվային և տեխնոլոգիական վերափոխում

Ծրագրի նպատակն է խթանել նորարարությունները և թվային, տեխնոլոգիական արդիականացումը, ինչպես նաև զարգացնել անհրաժեշտ հմտությունները աճի և միջազգայնացման ներուժ ունեցող, սակայն արտադրողականության ոչ բավարար մակարդակ ցուցաբերող ձեռնարկություններում:

Հայաստանում գործող ձեռնարկությունների զգալի մասը ունի արտադրողականության ցածր մակարդակ, ինչը խոչընդոտում է նրանց մրցունակությանը տեղական և միջազգային շուկաներում: Վերջինս պայմանավորված է ձեռնարկությունների թվայնացման ցածր մակարդակով (թվային տեխնոլոգիաների սահմանափակ կիրառություն, թվային գրագիտության պակաս), տեխնոլոգիական վերազինման պակասով (ժամանակակից սարքավորումների և տեխնոլոգիաների սահմանափակ կիրառություն, ներդրումների սահմանափակ հասանելիություն, նորարարությունների և հետազոտության պակաս), ինչպես նաև կառավարման հմտությունների բացերով (կառավարման ժամանակակից մեթոդների և արդյունավետ պրակտիկաների իմացության պակաս):

Ծրագրի շահառուներն են Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված այն փոքր և միջին ձեռնարկությունները (բացառությամբ՝ մանրածախ և մեծածախ ոլորտում գործունեությունը), որոնք ունեն առնվազն 3 տարվա գործունեության փորձ:

Ծրագրի նախնական փուլում Իրականացնող մարմնի կողմից շահառու ՓՄՁ-ներում կիրականացվի թվայնացման/նորարարության մակարդակի և բիզնես գործընթացների ախտորոշում, որի արդյունքներից ելնելով՝ յուրաքանչյուր կազմակերպության համար կմշակվի թվային և տեխնոլոգիական վերափոխման ծրագիր: Ընտրված աճի ներուժ ունեցող ՓՄՁ-ները կանցնեն համապատասխան վերապատրաստում և կստանան մասնագիտացված խորհրդատվություն և մենթորություն: Լավագույն արդյունք ցույց տված ՓՄՁ-ները կարող են օգտվել նաև սույն Ծրագրով սահմանված վարկային երաշխավորությունների մեխանիզմից (Ծրագրային ուղղություն 4):

4) Ծրագրային ուղղություն 4. Ֆինանսների հասանելիության ապահովում. վարկային երաշխավորությունների տրամադրման միջոցով

ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման (վարկավորման) հետ կապված հիմնախնդիրների հաղթահարման և այդ ուղղությամբ նրանց համար ֆինանսական (վարկային) միջոցների մատչելիության ապահովման նպատակով Ծրագրի շրջանակներում, որպես ֆինանսական աջակցության գործիք կկիրառվի ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրումը: Այն նպատակաուղղված է ՓՄՁ սուբյեկտներին

վարկային երաշխավորությունների տրամադրման միջոցով գրավադրման խնդրի հաղթահարմանը, ՓՄՁ սուբյեկտների վարկավորման հնարավորությունների ընդլայնմանը՝ հատկապես ՀՀ մարզերում և սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում:

Աջակցություն կցուցաբերվի հետևյալ երկու հիմնական նպատակով.

<u>4.1. Ֆինանսների հասանելիություն սկսնակ գործարարների համար.</u> միջոցառման շրջանակներում կցուցաբերվի աջակցություն՝ սկսնակ գործարարների ֆինանսավորման (վարկավորման) հնարավորություններն ընդլայնելու և ֆինանսավորման (վարկավորման) պայմանները բարելավելու համար: Ֆինանսական աջակցություն (վարկավորում) կցուցաբերվի «Գաղափարից դեպի բիզնես» ծրագրի շրջանակներում ուսուցման դասընթացների արդյունքում իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած և համապատասխան հանձնաժողովի կողմից ընտրված սկսնակ գործարարների բիզնես նախաձեռնությունների իրականացմանը:

Սկսնակ գործարարներին տրամադրվող ֆինանսական աջակցության (վարկավորման) առավելագույն գումարը կկազմի 5.000-7.000 հազ. դրամ, տարեկան 10 տոկոս տոկոսադրույքով, մինչև 5 տարի մարման ժամկետով, ընդ որում, վարկային պարտավորությունը 100 տոկոսի չափով կերաշխավորվի Իրականացնող մարմնի կողմից: Կախված իրականացվող ծրագրերի բնույթից՝ ֆինանսավորումը (վարկավորումը) կիրականացվի հաստատված ընթացակարգերի հիման վրա փուլային սկզբունքով՝ ապահովելով իրականացվող ծրագրերի շարունակականությունը և արդյունավետության բարձրացումը: Հաջորդ փուլում աջակցությունը կտրամադրվի առաջին փուլի արդյունքների գնահատման հիման վրա: Սույն ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորությունները տրամադրվում են Իրականացնող մարմնի գործընկեր ֆինանսական կառույցների միջոցով:

<u>4.2. Ֆինանսների հասանելիություն ՓՄՁ զարգացման համար.</u> միջոցառման շրջանակներում նախապատվությունը կտրվի 3 տարուց ավել պետական գրանցում ունեցող, գրավի անբավարարություն ունեցող արտադրության կամ ծառայությունների (բացառությամբ SS ոլորտի) ոլորտում գործող այն ՓՄՁ-ներին, որոնց գործունեությունն ուղղված կլինի թվային վերափոխմանը, արտահանման կարողությունների զարգացմանը, նորարարությունների ներդրմանը, ժամանակակից ու մաքուր տեխնոլոգիաների կիրառմանը: Նշված ուղղություններով շահառու համարվող ՓՄՁ-ներին՝ կախված կարիքից, մինչև ֆինանսավորումը, կարող են տրամադրվել մասնագիտացված ուսուցում և ուղղորդում (Ծրագրային ուղղություն 2):

ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման առավելագույն ժամկետը կարող է սահմանվել մինչև 5 տարի, երաշխավորության գումարը չի կարող գերազանցել վարկային պարտավորության (վարկի մայր գումար և տոկոսներ) 50

տոկոսը, սակայն ոչ ավել, քան 15,000.0 հազ. ՀՀ դրամը: Կախված իրականացվող ծրագրերի բնույթից՝ ֆինանսավորումը (վարկավորումը) կիրականացվի փուլային սկզբունքով՝ ապահովելով իրականացվող ծրագրերի շարունակականությունը և արդյունավետության բարձրացումը: Սույն ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորությունները տրամադրվում են Իրականացնող մարմնի գործընկեր ֆինանսական կառույցների միջոցով:

5) Ծրագրային ուղղություն 5. Կանանց, երիտասարդների և սոցիալական ձեռներեցության խթանում

Կանանց, երիտասարդների տնտեսական ներուժի լիարժեք իրացման և սոցիալական ձեռնարկատիրական գործունեության զարգացմանն աջակցելու նպատակով նախատեսվում է կազմակերպել նպատակային քննարկումներ և հանդիպումներ՝ ձեռնարկատիրական հնարավորությունների, պետական աջակցության ծրագրերի և ֆինանսավորման մեխանիզմների վերաբերյալ: Կխրախուսվի կանանց և երիտասարդների ակտիվ մասնակցությունը «Գաղափարից դեպի բիզնես» ծրագրերում: Կիրականացվեն համատեղ ծրագրեր և նախաձեռնություններ ուղղված ձեռներեց կանանց և երիտասարդներին, ինչպես նաև սոցիալական ձեռնարկությունների խրախուսմանը՝ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:

6) Ծրագրային ուղղություն 6. Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում

Հայաստանում ձեռնարկատիրության զարգացման կարևոր խնդիրներից է ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության միջազգայնացումը, որը լրացուցիչ հնարավորություններ կստեղծի տեղական ՓՄՁ-ի սուբյեկտների համար՝ արտաքին շուկաներ մուտք գործելու գործընթացում: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2025թ. հունվարի 23-ի N 98-Ն որոշմամբ հաստատված «Արտահանման խթանման նպատակով օժանդակության տրամադրման ծրագրի» շրջանակներում միջազգային ցուցահանդեսներին, տոնավաճառներին և գործարար համագործակցության հաստատման այլ միջոցառումներին ՓՄՁ սուբյեկտների մասնակցության արդյունավետության բարելավման նպատակով կիրականացվեն հետևյալ հիմնական գործողությունները.

- տեղեկատվության տարածում նախատեսվող միջոցառումների վերաբերյալ,
- մասնակիցների ընտրության կազմակերպում,
- ցուցահանդեսներին արդյունավետ մասնակցության նպատակով վերապատրաստման դասընթացների կազմակերպում,
- օժանդակություն՝ ցուցահանդեսների ընթացքում, ինչպես նաև բանակցությունների իրականացման, գործարար կապերի հաստատման հարցերում,

- ցուցահանդեսի արդյունավետության գնահատում, ՓՄՁ-ների հետ հետադարձ կապի ապահովում:
- խորհրդատվություն լոգիստիկ լուծումների, գնային քաղաքականության և մարքեթինգի, արտահանման հետ կապված իրավական կարգավորումների, փաստաթղթավորման և այլնի շուրջ:

ՓՄՁ սուբյեկտների միջազգայնացման նախաձեռնությունների խթանման նպատակով կուսումնասիրվի գործարար համագործակցության տարբեր հարթակներում Հայաստանյան ՓՄՁ-ների մասնակցության հնարավորությունը:

7) Ծրագրային ուղղություն 7. Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում

Սույն Ծրագրով նախատեսված ծրագրային միջոցառումների (ուղղությունների) իրականացման արդյունավետության բարձրացման ու ընդլայնման և այդ համատեքստում լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով, նոր ծրագրերի մշակման ու իրականացման, նաև միջազգային լավագույն փորձի փոխանցման նպատակով, աշխատանքներ կիրականացվեն Հայաստանում ՓՄՁ-ի զարգացմանն ուղղված համապատասխան ծրագրեր իրականացնող միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության ընդլայնման, ինչպես նաև նոր ծրագրային առաջարկների մշակման ու իրականացման ուղղությամբ:

VI.ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

17. Միջոցառման իրականացման համար նախատեսվում է.

1) Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից և Իրականացնող մարմնի վարկային երաշխավորությունների դրամագլխի միջոցներից:

2) Իրականացման ընթացքը ապահովել Ձև 1-ով սահմանված ժամանակացույցով:

3) Միջոցառմամբ նախատեսված ծրագրային ուղղությունների ֆինանսական ապահովումը կիրականացվի նաև հետևյալ ֆինանսական միջոցների հաշվին՝ սկսնակ գործարարներին և ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցության (վարկային երաշխավորությունների) տրամադրումը և գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական ու ներդրումային աջակցության (վարկային երաշխավորությունների) տրամադրումը կիրականացվի Իրականացնող մարմնի հիմնադրամային միջոցների հաշվին,

4) նշված ծրագրային ուղղությունների իրականացման նպատակով կարող են լրացուցիչ ներգրավվել նաև միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները, այդ թվում՝ համաֆինանսավորման սկզբունքով, ինչպես նաև ՀՀ մարզերում,

սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում գործող ՓՄՁ-ներին աջակցության ծրագրերից:

5) Յուրաքանչյուր ծրագրային ուղղության համար իրականացնող մարմինը կմշակի և Էկոնոմիկայի նախարարի համաձայնեցմանը կներկայացնի իրականացման հստակ գործիքակազմ, որը կներառի կիրառվող մեխանիզմներն ու գործիքները՝ ուղղության նպատակների արդյունավետ իրականացումն ապահովելու համար:

VII.ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

18. Միջոցառման արդյունավետությունը գնահատելու համար կկիրառվի մշտադիտարկման և գնահատման համակարգ, որը կներառի՝

1) Տնտեսական աճի չափումներ՝ ՓՄՁ-ների եկամուտների աճի վերլուծություն.

2) Աշխատատեղերի ստեղծման վերլուծություն՝ ոլորտների և համայնքների տարանջատմամբ.

3) Արտահանման աճի գնահատում՝ արտահանման շուկաների դիվերսիֆիկացման դիտարկում:

19. Մշտադիտարկումը վերապահվում է Իրականացնող մարմնին:

20. Մշտադիտարկման արդյունքները կամփոփվեն պարբերական հաշվետվությունների միջոցով, որոնք կտրամադրվեն շահագրգիռ կողմերին:

21. Միջոցառման շրջանակներում Իրականացնող մարմինը տարեկան մեկ անգամ՝ հաշվետու տարվա ավարտից հետո, պարտավոր է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը տրամադրել նպատակային ծրագրի պայմաններին համապատասխանության վերաբերյալ մշտադիտարկման հաշվետվություն, որը կպարունակի նաև Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի կողմից թողարկված հավաստիացման (բացի աուդիտից և դիտարկումից) միջազգային 3000 ստանդարտի (ISAE) համաձայն եզրակացություն՝ թողարկված 400 մլն ՀՀ դրամ և ավելի տարեկան շրջանառություն ունեցող աուդիտորական կազմակերպության կողմից:

22. Մշտադիտարկման արդյունքում տրված եզրակացության հիման վրա ոչ նպատակային որակված գործողությունների վրա ծախսված միջոցները ենթակա են վերադարձման պետական բյուջե:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունք	Ֆինանսավորման աղբյուրը	Կատարման վերջնաժամկետ	Ֆինանսավորման գումար (ՀՀ դրամ)
Ծրագրային ուղղություն 1. ՓՄՁ պետական աջակցության ենթակառուցվածքների և աջակցության մեխանիզմների բարելավում	1. ՓՄՁ աջակցության մշակված 2 նոր գործիք՝ ուղղված նորարարությունների, կայուն բիզնես մոդելների և տեխնոլոգիաների փոխանցմանը: 2. ՓՄՁ աջակցության ծրագրերի գնահատման և մոնիտորինգի ներդրված մեխանիզմ: 3. ՓՄՁ աջակցման համայնքային ցանցի մշակված մեխանիզմ: 4. ՓՄՁ-ների համար միավորված տեղեկատվական և առցանց ուսուցման գործարկված հարթակ/մշակված մոդուլներ: **5.** Շահառու ՓՄՁ-ների ստեղծված շտեմարան:	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե Միջազգային, դոնոր կազմակերպություն ներից ներգրավված միջոցներ	2025 դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ	50 մլն
Ծրագրային ուղղություն 2. Ձեռնարկատիրական կարողությունների զարգացում,	1. «Գաղափարից դեպի բիզնես» ծրագրին մասնակցած 200 սկսնակ գործարար:	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե	2025 նոյեմբերի երկրորդ տասնօրյակ	50 մլն

ձեռնարկատիրական մշակույթի տարածում	2. 150 մշակված իրատեսական գործարար ծրագրեր: 3. 40-50 նոր գրանցված ձեռնարկություններ:	Միջազգային, դոնոր կազմակերպություն ներից ներգրավված միջոցներ		
Ծրագրային ուղղություն 3. ՓՄՁ-ների նորարարական և միջազգայնացման կարողությունների զարգացում, թվային և տեխնոլոգիական վերափոխում	Շրջանառության/ աշխատատեղերի աճ գրանցած 50 ՓՄՁ:	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Միջազգային, դոնոր կազմակերպություն ներից ներգրավված միջոցներ:	2025 նոյեմբերի երկրորդ տասնօրյակ	
Ծրագրային ուղղություն 4. ֆինանսների հասանելիության ապահովում. վարկային երաշխավորությունների տրամադրման միջոցով	1. Վարկային երաշխավորություններ ստացած 120 ՓՄՁ: 2. Ստեղծված 150 աշխատատեղ:	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Վարկային երաշխավորություն ների դրամագլուխ: Միջազգային, դոնոր կազմակերպություն ներից ներգրավված միջոցներ:	2025 դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ	1 մլրդ

Ծրագրային ուղղություն 5. Կանանց, երիտասարդների և սոցիալական ձեռներեցության խթանում	1. 30% ստեղծված աշխատատեղեր՝ կանանց և երիտասարդների ներգրավմամբ: 2. 30% նոր գրանցված ձեռնարկություններ՝ կանանց և երիտասարդների ներգրավմամբ: 3. 10% նոր գրանցված ձեռնարկություններ ունեն սոցիալական ուղղվածություն:	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Վարկային երաշխավորություն ների դրամագլուխ:	2025 դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	10 մլն
Ծրագրային ուղղություն 6. Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում	1. Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության հմտությունները բարելավված 80 ՓՄՁ: 2. Արտահանման ծավալների աճ գրանցած 40 ՓՄՁ:	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Վարկային երաշխավորություն ների դրամագլուխ:	2025 դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	80 մլն
Ծրագրային ուղղություն 7. Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման **սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում**	Հաստատված առնվազն երեք համագործակցություն միջազգային, դոնոր կազմակերպությունների և մասնագիտացված ցանցերի հետ: Համատեղ նախաձեռնությունների մշակում և իրագործում:	-	2025 դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	-
Ընդհանուր				1,190,000,000 (1 միլիարդ 190 միլիոն ՀՀ դրամ)